է կը խախտէ կամ կը քանդէ ազգութիւնը՝ որոյ անունը է միակ պարծանք մեր պատմականական կեանքի համար, որով միայն մեզ մխիթարումնք մեր անթիւ և անտանելի կորուստների մէջ, որը միայն կարող է սրբել մեր աչքերից թափած առուի պէս — մեր երեսը փոնթերով պլանդակող արտասուքը, որը է վերջապէս առաջին և վերջին անգին գանձը ժառանգութիւն թողած մեր Նախնիքներից մէկ պատմականական կտակի մէջ, ունեցող իւր պարունակութիւնը, անէծք ամէն մի չկամեցողին այդ ժառանգութիւնը ծաղկեալ դրութեան և բարօրութեան մէջ պահպանել Հայի համար։ Այդ ժառանգութիւնն է մեր ուղղափառ Եկեղեցին։

(Պէտք շարունակել)

Սենեքերիմ Արծրունի։

# Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

---

## ՎԱՐԴԱՆ ՔԱՋՆ.

Քնքոյշ Սոխակն անոյշ երգով,
 Ջիւրն կարօտ առաւ վարդէն,
 Իսկ ես Արտազ հառաչելով,
 Չ'առի իղձս Աւարայրէն։
Ընկած թերթի ցաւը լալէն՝
 Ցօղնեցաւ այն խեղճ Սոխակը,
 Իսկ ես անգուլ ընկած տեղէն,
 Կըխնդրեմ քաջ Վարդանը։
Թռչնոց երամք երեկոյեան,
 Բաց կըմէկնին այգիներէն,
 Իսկ իմ սիրտըս բնաւին չ'ուզեր,
 Հեռանալ, ո՜հ Աւարայրէն։
Աւարայրի ցօղածըփիկ,
 'Փայլ կըժպտին ծաղիկները.
 Իսկ իմ սիրտըս տխրազգեցիկ՝
 Կըխնդրէ յար սուրբ Վարդանը։
Ո՜հ արեւն այլ արդէն է մօտ,
 Հրաժարուիլ երկրի վրայէն,
 Իսկ իմ սրտի իղձն ու կարօտ,
 Չի մեկնիլ բնաւ Աւարայրէն։
Զի ես ի սէր սուրբ Վարդանի,
 Կըպաշտեմ միշտ Աւարայրը,
 Անքուն աչօք ամէն տարի՝
 Կըյիշեմ քաջ սուրբ Վարդանը։
Իմ սրտի մէջ ճոխ իշխանը,
 Ոչ է կարող նախանձ ձգել.
 Քանի՛ ես իմ սուրբ Վարդանը,
 Երգուած եմ սերտ՝ յաւէտ սիրել։
Իշխանութիւն՝ պատիւ և փառք՝
 Թո՛ղ փնտռեն այս աշխարհը,
 Ինձ հարկ չ'կայ, իմ ամբողջ կեանքը,
 Ընտրըուած է լոկ Վարդանը։
Ես երկու յայս եմ սընուցած՝
 Մանկութենէս ցայս օրերը,
 Սիրել ընդ Հայ Կրօնիս զՆստուած,
 Եւ ընդ ազգիս սուրբ Վարդանը։
Տէ՛ր խորարմատ սէրս է ձգած՝
 Հայկազն անյաղթ այն Վեհ Քաջին,
 Ի՞նչպէս կընամ բացէ ի բաց՝
 Մոռանալ դաշտ Աւարայրին։
Թո՛ղ ես այս տեղ գիշեր ցերեկ՝
 Երգեմ միշտ այն վեհ Դիւցազնը,
 Թողէ՛ք մեր Հայ ազգասիրաց՝
 Ներբողեմ՝ յար սուրբ Վարդանը։
Նորա բոսոր արիւնասուն՝
 Փունջեր քաղեմ ծաղիկներէն,
 Եւ ձօնեմ՝ մեր իշխաններուն՝
 Սրբազան ընծայ Աւարայրէն։
Որովք փառուին ազգի սիրով,
 Մերժեն միշտ հեռ նախանձը,
 Յաւէտ յիշեն մեծ փափաքով՝
 Ցանկալի սուրբ Վարդանը։
Իմ Վարդանի անուն քաղցր է,
 Թռչունք այլ զայն միշտ կերգեն,
 Մինչ չունչ ունիմ՝ ինձ դժուար է՝
 Չեռքըս քաշել Աւարայրէն։
Ամէն չըթունք անձկով կերգեն՝
 Այն Դիւցազնին վեհ անունը,
 Օրօրոցի նաև տղէն՝
 Թո՛ղ նըւագէ սուրբ Վարդանը։
Թող առաջի բառը բերնէն՝
 Մայր թոթովլի Հայ մանկանը,
 Եւ երկրորդը ձայնով փափկեն՝
 Դիւցազըն քաջ սուրբ Վարդանը։
Թո՛ղ ազգասէր հայր և մայրը՝
 Համբուրէ այն վառ բերանը՝
 Որ չպաշտեր օտարները,
 Այլ իւր քաջ սուրբ Վարդանը։
Յայնժամ այո՛ ըստ արժանւոյն՝
 Կըյարգուի սուրբ նահատակը,
 Եւ մեր սերունդք չեն լինիլ քուն՝
 Տեսնել խեղճ դաշտ Աւարայրը։
Եւ սիրալիր սրտափափաք՝
 Ապագայ գէթ Հայկազունքը՝
 Վարդան առնուն միշտ օրինակ,
 Եւ հայրենիք Աւարայրը։

Գրիգոր [illegible]

---

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՐՇԱԼՈՅՍ.

Հեզիկ մեջիկ պարտիզին ծաղկանց ի թուփ ի տերև
Այն ինչ տարատ, այն ինչ ցօղ ի շաղ շաղէ գեղերև,
Ոսկիաշող քոյդ ճաճանչ նազէ յերկինս գեղալոյս.